ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Getq.shirak@mta.gov.am

Թիվ ----191 ----

<<19>> դեկտեմբերի *2019թ*

<< ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ՊԱՐՈՆ՝ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան

<< Շիրակի մարզի Գետքի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում Գետք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 26-ից 33 որոշումները:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝

ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՈՐՈՇՈՒՄ N 26

<<15 >> դեկտեմբերի 2019 թվական գյուղ Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 7 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքիվարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի 2019 թվականի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ղեկավարի 2020 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու և համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 30-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2020 թվականի քանակը, հաստիքացուցակը նպաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 31-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

*5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին:*

*6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ավագանու2018թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 32-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:*

*7.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի մեկ անապահով ընտանիքի միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին:*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Գետք համայնքի ավագանու անդամներ՝ Կողմ՝(4) Դեմ՝(0) Չեռնպահ՝(0)

Թորոսյան Ալբերտ --- --- ---

Հովհաննիսյան Արտավազդ --- --- ---

Շաբոյան Քաջիկ --- --- ---

Սարիբեկյան Գուրգեն --- --- ---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ

<<15 >> դեկտեմբեր2019թվական

գյուղ Գետք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ Գ Ե Տ Ք ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 27 -Ն

<< 15 >> դեկտեմբերի 2019 թվական գյուղ Գետք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ,10-րդ,11-րդ,12-րդ,13-րդ և 14-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքի ավագանին

**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանել՝ համաձայն հավելված թիվ 1-ի և հավելված թիվ 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գետք համայնքի ավագանու անդամներ՝

| | | Կողմ՝(4) | Դեմ՝(0) | Ձեռնպահ՝(0) |
|---|---|---|---|---|
| Թորոսյան | Ալբերտ | ---------- | ---------- | ---------- |
| Հովհաննիսյան | Արտավազդ | ---------- | ---------- | ---------- |
| Շաբոյան | Քաջիկ | ---------- | ---------- | ---------- |
| Սարիբեկյան | Գուրգեն | ---------- | ---------- | ---------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

<<15 >> դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Գետք

Հավելված թիվ 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գետք համայնքի ավագանու 2019 թվականի
դեկտեմբերի 15-ի թիվ 27-Ն որոշման

*Տեղական տուրքերի դրույքաչափեր*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքում (այսուհետ՝ համայնք) սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

1)հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

2)սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝քսանհինգ հազար դրամ,

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝հիսուն հազար դրամ.

3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա.մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա)

հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

2)բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4.Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվահամար՝երկու հարյուր հազար դրամ.

5.Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6.Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7.համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցո հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝տասը հազար մեկ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ.

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

8.Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9.Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1)առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

3)բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

4)խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. Շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

5)վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10.Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1)հիմնական շինությունների ներսում՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համա ր՝ հինգ հազար մեկ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար մեկ դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամ.

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար մեկ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ինն հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ.

11.Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

3)սոցիալական գովազդի համար՝զրո դրամ,

4)այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

5)դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանվա ծտուրքի 10 %-ի չափով.

12.Համայնքի խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13.Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15.համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) 3 հեկտարից մինչև 5 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

2) 5 հեկտարից մինչև 7 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝հինգ միլիոն դրամ,

3) 7 հեկտարից մինչև 10 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝յոթ միլիոն դրամ,

4) 10 հեկտարից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝տասը միլիոն դրամ:

16. Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

17. Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազար ՀՀ դրամ.

2) հեստապարային ակումբ համար՝օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ հարյուր հազար ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի
Գետք համայնքի ղեկավար՝

Հ. Սխիթարյան

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գետք համայնքի
ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 15-ի
թիվ 27-Ն որոշման

## Տեղական վճարների դրույքաչափեր

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքում (այսուհետ՝ համայնք) սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

3.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցմա վճար՝ մեկ հազար դրամ.

4.Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հարյուր դրամ.

5.Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հարյուր դրամ.

6.Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հարյուր դրամ.

7. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է

ա. Ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական մեկ հարյուր դրամ, կամ

բ. Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան դրամ:

2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի (այդթվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ.

բ. Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան դրամ.

գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ դրամ.

դ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք դրամ.

ե. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափով:

3) Ոչ կենցաղային աղբի համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. Ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար դրամ, կամ

բ. Ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար դրամ:

8.Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է մեկ հազար դրամ.

9. Կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ մեկ հարյուր դրամ. բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն

սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10. Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ -----. բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11. Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ ------, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

12. Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ մեկ հարյուր դրամ.

13. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ հինգ հազար դրամ.

14. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ երկու հազար դրամ.

15. Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

16. Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ Հայաստանի Հանրապետության մեկ հազար դրամ.

17.Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների,

ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է.

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մեկ հարյուր դրամ

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մեկ հազար դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ երեք հազար դրամ

4) մեկ ամսվա համար՝ տաս հազար դրամ

5) մեկ տարվա համար՝ հիսուն հազար դրամ դրամ

11.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝հինգ հարյուր դրամ փոխհատուցման վճար:

12. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ հիսուն հազար դրամ փոխհատուցման գումարի չափով:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի
Գետք համայնքի ղեկավար՝ Հովիկ Մխիթարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

---

**ՈՐՈՇՈՒՄ N28**

**<<15 >> դեկտեմբերի 2019 թվական** **գյուղ** Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի1-ին մասի 32-րդ կետով՝

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքի 2019 թվականի սեփականության գույքի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գետք համայնքի ավագանու անդամներ՝ Կողմ՝(4) Դեմ՝(0)
Ձեռնպահ՝(0)

Թորոսյան Ալբերտ

Հովհաննիսյան Արտավազդ

Շաբոյան Քաջիկ

Սարիբեկյան Գուրգեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ
<<15 >> դեկտեմբերի 2019թվական

Հավելված
Հայաստանի Հանրապետության Գետքի համայնքի
ավագանու 2019 թվականի դեկտեմբերի
15-ի թիվ 28 որոշման

# ՑՈՒՑԱԿ

| N | Գույքի անվանումը | քանակը | Հաշվարկ. արժեքը | Վիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյակի շենք | 1 | 12000 | բավարար |
| 2 | Գրասենյակի շենքին կից պահեստ | 2 | 4000 | բավարար |
| 3 | Գրասենյակի աթոռ | 9 | 4860 | |
| 4 | Գրասենյակի սեղան | 4 | 0 | |
| 5 | Կասսա երկաթյա | 4 | 0 | լավ |
| 6 | Նավթային տարա | 2 | 0 | լավ |
| 7 | Հուշարձան | 1 | 641550 | Նորոգման կարիք ունի |
| 8 | Հուշարձանի ցանկապատ | 1 | 2617104 | Նորոգման կարիք ունի |
| 9 | Կոմբայն ՍԿ -5 | 1 | 0 | սարքին |
| 10 | Հակավորող մեքենա | 1 | 0 | սարքին |
| 11 | Հացահատիկի շարքացան | 1 | 0 | սարքին |
| 12 | Տաքացուցիչ ՆԻԿԱ 834, 837, ԱՍԵԼ | 3 | 54379 | աշխատող |
| 13 | Համակարգիչ | 2 | 0 | աշխատող |
| 14 | Կենցաղի տուն | 1 | -- | Նորոգման կարիք ունի |
| 15 | Ջրհան կայանի շենք | 1 | -- | Թալանված, վթարային |
| 16 | Շչակ Ս-40 | 1 | 0 | անսարք |
| 17 | Կառավարման վահանակՊ-164ԱՄ | 1 | 0 | անսարք |
| 18 | Գրապահարան | 1 | 15275 | լավ |
| 19 | Բազկաթոռ | 2 | 36660 | լավ |
| 20 | Սկաներ Քենոն ՄՊ250 | 1 | 4510 | աշխատող |
| 21 | ՅՈՒՊԻԵՍ ՄԵՐԿՈՒՐԻ | 1 | 0 | աշխատող |
| 22 | Հակակարկտային կայան | 2 | 5303480 | աշխատող |
| 23 | Ներհամայնքային ճանապարհներ | 3,0կմ | 7200000 | |
| 24 | Տրակտոր Տ-70Ը | 1 | 3506 | անսարք |
| 25 | Տրակտոր ԴՏ -75 | 1 | 0 | անսարք |
| 26 | Գութան վարելու | 1 | 0 | անսարք |
| 27 | Կուլտիվատոր | 1 | 0 | անսարք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 28 | Ակոսահանիչ | 1 | 0 | անսարք |
| 29 | Լաֆետ տրակտորի | 2 | 0 | անսարք |
| 30 | Տարա յուղի | 1 | 0 | Քայքայված |
| 31 | Բաղնիքի շենք | 1 | 0 | վթարային |
| 32 | Նասոս | 2 | 0 | անսարք |
| 33 | Տրակտոր ՅՈՒՄԶ | 1 | 0 | անսարք |
| 34 | Ցանկապատ գերեզմանների | 605մ$^2$ | 0 | սարքին |
| 35 | Կոմբայն ՍԿ-5 | 2 | 16000 | անսարք |
| 36 | Տրակտոր ՄՏԶ-80 | 2 | 0 | անսարք |
| 37 | Հակավարող մեքենա | 2 | 0 | անսարք |
| 38 | Հացահատիկի շարքացան | 1 | 0 | անսարք |
| 39 | Սերմազտիչ | 1 | 0 | անսարք |
| 40 | Ավտոմեքենա niva | 1 | 5.000 | |
| 41 | Հակակարկտային կայան | 2 | 4800000 | սարքին |
| 42 | Գիշերային լուսավորության ցանց | 71 | | սարքին |
| 43 | Համակարգիչ | 2 | 511000 | սարքին |
| 44 | Ոռոգման ցանց | 4.0կմ | 1200000 | |
| 45 | Գլան | 1 | 0 | անսարք |
| 46 | Կուլտուրայի տան շենք | 1 | - | վթարային |

Գետքի համայնքի ղեկավար՝ Հ. Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՈՐՈՇՈՒՄ N 29

<<15 >> դեկտեմբերի 2019թվական գյուղ Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
**2020** ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Գետք համայնքի ավագանին

**որոշում է**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքի ղեկավարի 2020 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 34.78 տոկոսի չափով՝ 230000( երկու հարյուր երեսուն հազար) դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք
համայնքի ավագանու անդամներ՝ ( կողմ՝4 ) (դեմ՝0) (ձեռնպահ՝0)

Ալբերտ Թորոսյան

Արտավազդ Հովհաննիսյան

Գուրգեն Սարիբեկյան

Քաջիկ Շաբոյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գետք համայնքի ղեկավար՝ Հ. Մխիթարյան
«15>> դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Գետք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 30

<<15>> դեկտեմբերի 2019 թվական գյուղ Գետք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 34-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքի ավագանին

**որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 5 :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք
համայնքի ավագանու անդամներ՝

| | | Կողմ՝4 | Դեմ՝0 | Ձեռնպահ՝0 |
|---|---|---|---|---|
| Թորոսյան | Ալբերտ | ---------- | ---------- | ---------- |
| Հովհաննիսյան | Արտավազդ | ---------- | ---------- | ---------- |
| Շաբոյան | Քաջիկ | ---------- | ---------- | ---------- |
| Սարիբեկյան | Գուրգեն | ---------- | ---------- | ---------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
15 դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Գետք

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գետքի համայնքի ավագանու 2019 թվականի
Դեկտեմբերի 15-ի թիվ 30 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 165000 | 71.73 | 1 | 165000 | 165000 |
| 2 | Առաջատար մասնագետ | 1 | 155000 | 67.39 | 1 | 155000 | 155000 |
| Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | | | | |
| 3 | Համակարգչային օպերատոր | 1 | 90000 | 39.13 | 1 | 90000 | 90000 |
| 4 | Հարկային գործակալ | 1 | 95000 | 41.30 | 1 | 95000 | 95000 |
| 5 | Հավաքարար | 1 | 71500 | 31.08 | 0,5 | 35750 | 35750 |
| Ընդամենը | | 5 | 576500 | | 4,5 | 576500 | 576500 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31-Ն

« *15*» դեկտեմբերի 2019 թվական գյուղ Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետքի համայնքի 2020 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ավագանու անդամներ՝

(կողմ-4) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Ալբերտ Թորոսյան

Արտավազդ Հովհաննիսյան

Գուրգեն Սարիբեկյան

Քաջիկ Շաբոյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գետք համայնքի ղեկավար՝ Հ. Մխիթարյան

«15» դեկտեմբերի 2019 թվական

*ՀԱՎԵԼՎԱԾ*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գետք համայնքի ավագանու 2019թվականի
դեկտեմբերի 15 -ի թիվ 31 -Ն որոշման

| | |
|---|---|
| Եկամուտների գծով | 17294.2 հազար դրամ |
| Ծախսերի գծով | 17294.2 հազար դրամ |
| Հաստատել համայնքի բյուջեն ըստ առանձին | |
| Եկամուտների տեսակների | |

ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| | |
|---|---|
| Գույքահարկ շինությունների | 26.5 հազար դրամ |
| Հողի հարկ | 2751.3 հազար դրամ |
| Գույքահարկ Փոխադրամիջոցների համար | 1488.8 հազար դրամ |
| Տեղական տուրքեր | 128.0 հազար դրամ |
| Ընդամենը | 4394.6 հազար դրամ |

ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| | |
|---|---|
| Դոտացիա | 10375.5 հազար դրամ |
| Հողի վարձակալության վճար | 2050.1 հազար դրամ |
| Գույքի վարձակալության վճար | 114.0 հազար դրամ |
| Այլ վճարներ (աղբահանում ) | 300.0 հազար դրամ |
| Աճուրդների,մրցույթների մասնակցության վճար | 10.0 հազար դրամ |
| Այլ տեղական վճարներ | 50.0 հազար դրամ |
| Ընդամենը | 12899.6 հազար դրամ |
| Ընդամենը դրամական եկամուտներ | 17294.2 հազար դրամ |

Հաստատել բյուջեն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

| | |
|---|---|
| Ընդամենը ծախսեր | 17294.2 հազար դրամ |
| Ընդամենը ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 12876.7 հազար դրամ |
| Այդ թվում | |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ | 12606.7 հազար դրամ |
| որից | |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ | 12606.7 հազար դրամ |
| Աղբահանում | 300.0 հազար դրամ |
| Փողոցների լուսավորում | 600.0 հազար դրամ |
| Այլ նպաստներ բյուջեից | 400.0 հազար դրամ |
| Պահուստային միջոցներ | 2297.5 հազար դրամ |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 70.0 հազար դրամ |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 200.0հազար դրամ |
| Պաշտպանություն | 100.0 հազր դրամ |
| Գյուղատնտեսություն | 720.0հազար դրամ |

## ԱՅԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

| | |
|---|---|
| Միջոցների տարեսկզբի մնացորդը վարչական բյուջե | 0 |
| Միջոցների տարեսկզբի մնացորդը ֆոնդային բյուջ | 0 |
| Դեբիտորական պարտք | 0 |
| Կրեդիտորական պարտք | 0 |

Գետքի համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

| | |
|---|---|
| 1. 2020 թվիհամար հաշվարկված աշխատավարձ | 9430.8 հազար դրամ |
| 2. Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ | 785.9 հազար դրամ |
| 3.Էներգետրի ծառայություններ | 750.0 հազար դրամ |
| 4.Կապի ծառայություններ | 150.0 հազար դրամ |
| 5.Ապահովագրական ծախսեր | 40.0 հազար դրամ |
| 6. Գործուղման ծախս | 100.0 հազար դրամ |
| 7. Համակարգչային ծառայություններ | 200.0 հազար դրամ |
| 8.Տեղեկատվական ծառայություններ | 110.0 հազար դրամ |
| 9. Մասնագիտական ծառայություններ | 400.0 հազար դրամ |
| 10.Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում | 200.0 հազար դրամ |
| 11. Գրասենյակային նյութեր | 200.0 հազար դրամ |
| 12. Տրանսպորտային նյութեր | 400.0 հազար դրամ |
| 13.Հատուկ նպատակային այլ նյութեր | 300.0 հազար դրամ |
| 14. Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 30.0 հազար դրամ |
| 15.Պահուստային միջոցներ | 2297.5 հազար դրամ |
| 16.Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 1100.0 հազար դրամ |
| 17 . Դրամաշնորհ | 50.0 հազար դրամ |
| 18 Այլ նպաստներ բյուջեից | 400.0 հազար դրամ |
| 19. Պարտադիր վճարներ | 50.0 հազար դրամ |
| 20.Կոմունալ ծառայություն | 300.0հազար դրամ |
| Ընդամենը | 17294.2հազար դրամ |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գետքի համայնքի ղեկավար՝ Հ. Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 32-Ն

<< 15>> դեկտեմբերի 2018 թվական գյուղ Գետք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 32 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ավագանու 2018 թվականի դեկեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 32 -Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Ծախսային մասի

1) << Հիմնական բաժիններին չդասվող Պահուստային միջոցներ>>11.1.1 ծրագրի 4891 հոդվածի

<< >> հազար դրամ թիվը փոխարինել << >> հազար դրամ թվով:/2076պակասեցնել/

2) ոռոգում բաժնի սուբվենցիոն ծրագրի 5113 հոդվածի

<< 5457.9>> թիվը փոխարինել << 5459.9>> հազար դրամ թվով և բառերով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

| Գետք համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ՝(4) | Դեմ՝(0) | Չեռնպահ՝(0) |
|---|---|---|---|
| Թորոսյան Ալբերտ | | | |
| Հովհաննիսյան Արտավազդ | | | |
| Շաբոյան Քաջիկ | | | |
| Սարիբեկյան Գուրգեն | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ

<<15 >> դեկտեմբերի 2019 թվական

գյուղ Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 33

<<15>> դեկտեմբերի 2019 թվական գյուղ Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՈՒ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի 2019 թվականի բյուջեի սոցիալական պաշտպանություն բաժնի <<Այլ նպաստներ>> 4729 հոդվածից տրամադրել՝ միանվագ դրամական օգնություն Գետք համայնքի հետևյալ անապահով ընտանիքին՝

1.Արուսյակ Պողոսյանին-20000( քսան հազար) դրամ

2. Տոնոյան Մովսեսին - 20000( քսան հազար) դրամ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք

համայնքի ավագանու անդամներ՝ Կողմ՝(4) Դեմ՝(0) Ձեռնպահ՝(0

Թորոսյան Ալբերտ

Հովհաննիսյան Արտավազդ

Շաբոյան Քաջիկ

Սարիբեկյան Գուրգեն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Գետք համայնքի ղեկավար՝ Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

<<15>> դեկտեմբերի 2019 թվական

գյուղ Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 33

<<15>> դեկտեմբերի 2019 թվական գյուղ Գետք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՏՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՈՒ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք համայնքի 2019 թվականի բյուջեի սոցիալական պաշտպանություն բաժնի <<Այլ նպաստներ>> 4729 հոդվածից տրամադրել՝ միանվագ դրամական օգնություն Գետք համայնքի հետևյալ անապահով ընտանիքին՝

1.Արուսյակ Պողոսյանին-20000( քսան հազար) դրամ

2. Տոնոյան Մովսեսին - 20000( քսան հազար) դրամ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գետք

համայնքի ավագանու անդամներ՝ Կողմ՝(4) Դեմ՝(0) Ձեռնպահ՝(0

Թորոսյան Ալբերտ

Հովհաննիսյան Արտավազդ

Շաբոյան Քաջիկ

Սարիբեկյան Գուրգեն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Գետք համայնքի ղեկավար՝ Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

<<15>> դեկտեմբերի 2019 թվական

գյուղ Գետք